ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐ

# 1917 թ. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

1917 թ. ժամանակավոր կառավարության հողագործության մինիստրությունը երկրում անցկացրեց գյուղատնտեսական վիճակագրություն։ Այն, մեր կարծիքով, ծառայելու էր նաև Սահմանադիր ժողովի համար նյութեր պատրաստելու, նրա կողմից հողային հարցը լուծելու նպատակին։ Հողային կոմիտեներ կազմակերպելու մասին այդ կառավարության նույն թվականի ապրիլի 21-ի որոշման մեջ նշված է, որ հողային հարցի «վերջնական և ճիշտ» լուծման համար հարկավոր է նախապես ամենուրեք տվյալներ հավաքել բնակչության հողային կարիքների մասին և Սահմանադիր ժողովի համար նախապատրաստել «նոր օրենք հողային կարգի մասին»[1]։ Հողային հարցը, սակայն, լուծեց Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությունը՝ Սովետների համառուսաստանյան II համագումարում ընդունելով հողի մասին լենինյան դեկրետը։

1917 թ. գյուղատնտեսական վիճակագրության տվյալները կարևոր սկզբնաղբյուր են Ռուսաստանի գյուղացիության և հողային հարաբերությունների պատմությունն ուսումնասիրելու համար։ Այդ վիճակագրության նյութերի կարևորությունը ցույց տալու համար նշենք, որ դրանք մանրամասն տվյալներ են հաղորդում գյուղական բնակավայրերի, բնակչության, նրա սեռային ու ազգային կազմի, ծխերի, գաղթականության, արտադրության միջոցների, վարձակալական հարաբերությունների, հողատարածությունների, հողային սեփականության ու հողօգտագործման ձևերի և այլ հարցերի վերաբերյալ։ Ավելացնենք, որ վիճակագրական ձևերից մեկը («Գյուղական բլանկ») ունի 131 հարց 17 թերթի վրա, իսկ մյուսը [«Քարտեր գյուղացիական տնտեսությունների ընտրովի (2 տոկոս) մարդահամարի համար»]՝ 177 հարց մեկ թերթի վրա։ Իհարկե, բոլոր հարցերը չէ, որ լրացված են, այնուամենայնիվ, առկա նյութն անփոխարինելի աղբյուր է համապատասխան պրոբլեմների լուսաբանության համար։

1917 թ. գյուղատնտեսական վիճակագրության նյութերը, որոնք վերաբերում են Ռուսաստանի նահանգներին, մշակել և հրատարակել են սովետական իշխանության վիճակագրական մարմինները[2]։ Անդրկովկասում ազգային բուրժուական պետությունների ստեղծումը և սովետական իշխանության հաղթանակի ձգձգումը բացասաբար անդրադարձան երկրամասի գյուղատնտեսական վիճակագրության նյութերի համատեղ և ամբողջական մշակման վրա։ Առանձին վերցրած, դա դժվար լուծելի խնդիր էր Հայաստանի համար, որը չուներ կամ գրեթե չուներ համապատասխան կադրեր և նյութական միջոցներ։ Մինչև այսօր Հայաստանի (Երևանի նահանգ և Կարսի մարզ) նյութերը մնում են անմշակ և չտպագրված, որը գրեթե բացառում է դրանցից օգտվելը։ Ժամանակին դաշնակցականների կառավարությունը փորձ է կատարել Երևանի նահանգի և Կարսի մարզի նյութերը մշակելու և հրատարակության նախապատրաստելու համար։ Մշակման աշխատանքները սկսվել են Թիֆլիսում, ապա ընդհատվել են, այնուհետև վերսկսվել 1920 թ. հոկտեմբերին Երևանում։ Սովետական կարգերի հաստատումից հետո դրանք շարունակվել են մինչև 1921 թ. փետրվար։ Հավանորեն, դաշնակցականների փետրվարյան խռովության պատճառով, աշխատանքները դադարել են, իսկ հետո այլևս ուշադրության չեն արժանացել։

Սույն հավաքածուի նյութերը պատմում են այն մասին, թե 1919—1921 թթ. ինչպիսի մըտայնություն է գոյություն ունեցել և ինչպիսի քայլեր են կատարվել 1917 թ. գյուղատնտեսական վիճակագրության նյութերի մշակման հարցի ուղղությամբ։ Վավերագրերի տպագրության նպատակն է գաղափար կազմել տալ այդ նյութերի նշանակության մասին, թերևս նաև նպաստել դրանց մշակման ու հրապարակ հանելու գործին։

---

[1] Տե՛ս «Революционное движение в России в апреле 1917 г. Апрельский кризис. Документы и материалы», М., 1958, с. 316—317.

[2] Տե՛ս «Погубернские итоги Всероссийской сельскохозяйственной и поземельной переписи 1917 г.» («Труды ЦСУ», V, вып. 1, М., 1921).

1917 թ. գյուղատնտեսական վիճակագրության Երևանի նահանգի և Կարսի մարզի նյութերը, որոնք ժամանակին կենտրոնացվել են Թիֆլիսում, ապա փոխադրվել Երևան, այժմ պահվում են Հայկական ՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվում[3]։

Վ. Ն. ՂԱԶԱԽԵՑՅԱՆ

## № 1

### Հայաստանի Մինիստրների խորհրդի որոշումը 1917 թ. գյուղատնտեսական վիճակագրության նյութերը մշակելու հարցի մասին

22 մայիսի 1919 թ.

Լսեցին. Պարենավորման մինիստրի զեկուցումը 1917 թ. համառուսական գյուղատնտեսական և պարենավորման ցուցակագրության՝ Հայաստանի վերաբերյալ նյութերը մշակելու կարևորության մասին։

Որոշեցին. Հանձնարարել պարենավորման մինիստրին՝ նախահաշիվ ներկայացնել Մինիստրների խորհրդին այդ հարցի մասին։

Հայկ. ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 200, ց. 1, գ. 22 (1-ին մաս), թ. 112։ Վավերացված պատճեն։ Մեքենագիր։

## № 2

### Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիայի Վրաստանի ներկայացուցչության գրությունը գյուղատնտեսության և պետական գույքերի գլխավոր վարչությանը՝ 1917 թ. գյուղատնտեսական վիճակագրության նյութերը Վրաստանի կառավարությունից ստանալու և Երևան ուղարկելու հարցի մասին

№ 2793 2 սեպտեմբերի 1919 թ.

Այսու պատիվ ունեմ զեկուցանելու, որ ստացվել են Վրաց կառավարությունից Երևանի և Ղարսի շրջանների վերաբերյալ վիճակագրական նյութերը՝ 9 արկղ և 16 կապոց, ուստի խնդրում եմ հաղորդեք՝ հարկավո՞ր է այդ նյութերը ուղարկել Երևան, թե թողնել այստեղ մինչ նոր կարգադրություն։

Դիվանագիտական ներկայացուցիչ Լ. Եվանգուլյան
Գործերի կառավարիչ Գ. Երիցյան

Մակագրություն. Խնդրել անհապաղ ուղարկել Երևան։

Հայկ. ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 203, ց. 1, գ. 309, թ. 8։ Բնագիր։ Մեքենագիր։

---

[3] Տե՛ս ՀՍՍՀ պետական կենտրոնական պատմական արխիվ, ֆ. 215, ց. 1, գ. 54—1035։

## № 3

### Հայաստանի գյուղատնտեսության և պետական գույքերի գլխավոր վարչության գյուղատնտեսական բաժանմունքի գրությունը Հայաստանի Հանրապետության դիվանագիտական միսիայի Վրաստանի ներկայացուցչին՝ 1917 թ. գյուղատնտեսական վիճակագրության նյութերը Երևան փոխադրելու մասին

№ 1486 — 13 սեպտեմբերի 1919 թ.

Ձեր սեպտեմբերի 2 № 2793 գրությունից տեղեկացանք, որ ստացվել է Վրաց կառավարությունից Երևանի և Ղարսի շրջանների վերաբերյալ վիճակագր[ական] նյութերը՝ 9 արկղ և 16 կապոց։

Գյուղատնտեսության և պետական գույքերի գլխավոր վարչության երկրագործական բաժանմունքը սրանով պատիվ ունի խնդրել Ձեզ շուտափույթ հիշյալ նյութերը ուղարկել Երևան, վարչության անունով։

Հայկ. ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 203, ց. 1, գ. 309, թ. 10 և հակ.։ Պատճեն։ Ձեռագիր։

## № 4

### Հայաստանի հանրապետության դիվանագիտական միսիայի Վրաստանի ներկայացուցչության գրությունը գյուղատնտեսության և պետական գույքերի գլխավոր վարչությանը՝ 1917 թ. գյուղատնտեսական վիճակագրության նյութերը Երևան ուղարկելու համար Վրաստանի իշխանություններից թույլտվություն ստանալու հարցի մասին

№ 3056 — 22 սեպտեմբերի 1919 թ.

Ի պատասխան № 1486 Ձեր գրության, այսու պատիվ ունեմ հայտնելու, [illegible] դիմված է Վրաց արտաքին գործերի մինիստրության թույլտվություն ստանալու խնդրով, որից դրական պատասխան ստանալուն պես հիշյալ վիճակագրական նյութերը կուղարկվեն արտաքին գործերի մինիստրության հասցեով, [illegible] այդ մասին արդեն դիմել է։

Ի տ[եղի] գործերի կառավ[illegible]
Ի տ[եղի] գործավարի Կարճի՝ [illegible]

Հայկ. ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 203, ց. 1, գ. 309, թ. 11։ Բնագիր։ Մեքենագիր։

---

* Ստորագրությունն անընթեռնելի է։

## № 5

*Отношение Главного управления земледелия и государственных имуществ к армянской дипломатической миссии в Грузии по вопросу об отправке материалов переписи 1916 и 1917 годов в Эривань*

№ 2187 13 ноября 1919 г.

Прошу сдать имеющиеся у Вас статистические материалы по переписи 1916 и 1917 годов, касающиеся Армении, и оказать надлежащее содействие заведывающему статистическим отделом Главного управления сельского хозяйства и государственных имуществ Б. Ишханяну для переотправки таковых в Эривань.

Главноуправляющий
Заведывающий отделом земледелия.
Делопроизводитель

ЦГИА АрмССР. ф. 203, оп. 1, д. 309, л. 22. Копия. Машинопись.

## № 6

*Отношение статистического бюро Министерства земледелия Республики Армении и Научно-экономической экспедиции бр. Маиловых к Министерству земледелия по вопросу о необходимости разработки материалов сельскохозяйственной переписи 1917 г. по Эриванской губернии и Карсской области в Тифлисе*

26 ноября 1919 г.
Тифлис

В дополнение к докладной записке, представленной в августе с. г. Научно-экономической экспедицией бр. Маиловых господину Министру —Президенту Республики Армении по вопросу о необходимости и неотложности разработки материалов Всероссийской переписи 1917 г. в части, касающейся Армении, считаем необходимым указать на одно важное обстоятельство, связанное с техникой разработки.

Как известно, перепись по Эриванской губ[ернии] началась разрабатываться в Тифлисе в статистическом отделе Общекавказской краевой управы, куда были доставлены материалы и по Карсской обл[асти] для разработки. Обстоятельство это обуславливалось отсутствием достаточного контингента работников и руководителей для разработки на местах. В известной своей части материалы эти были разработаны в означенном статистическом отделе.

В наст[оящее] время момент этот, заставивший разработку материалов перенести в Тифлис, остается в силе, так как и теперь невозможно завербовать необходимый штат служащих, числом 40—50, и, кроме того, пригласить руководителей, опытных в деле разработки переписи в Эривани, или в Армении вообще. Между тем Тифлис представляет эту возможность, так как в Тифлисе и в настоящее время проживают очень многие не только из числа работавших по разработке переписи Эриванской губ[ернии], но и Тифлисской, Кутаисской губерний.

Это обстоятельство позволяет, имея опытных работников, ускорить

разработку и тем уменьшить расходы, одновременно поднимая качество работ.

Следующим важным обстоятельством является вопрос о помещении. Ввиду того, что в целях ускорения разработки необходимо вести занятия в две смены, по утрам и вечерам, то вопрос о помещении, достаточно просторном и светлом, является важным моментом в деле успеха работ. Между тем ни Эривань, ни какой-либо другой город в Армении, в силу переживаемых этими городами жилищных условий, не представляет возможности иметь подходящее помещение, тогда как в Тифлисе гораздо больше имеется возможность к этому.

Самая перевозка материалов переписи потребует много хлопот и материалы могут растеряться.

Ко всему вышесказанному следует еще добавить, что разработка материалов в Тифлисе позволяет не только иметь необходимые канцлярские принадлежности на месте, но и необходимые пособия, счетные машины, линейки и др., а также быстро и сравнительно дешевле производить типографские работы, что весьма трудно, а в некоторых случаях и будет невозможно иметь в Эривани.

Все вышесказанное говорит за необходимость разработки материалов в Тифлисе, где находится в настоящее время весь переписной материал и где имеются благоприятные условия для разработки переписи (руководящий и счетный персонал, помещение, пособия и т. д.).

Представляя настоящую записку Вашему вниманию, мы надеемся, что возбуждаемое нами ходатайство получит удовлетворение и согласие с Вашей стороны.

Одновременно считаем необходимым указать, что как интересы возможно скорого получения результатов переписи для целого ряда очередных вопросов в деле строительства Армении, так и финансовые соображения (все повышающиеся цены на рабочие руки и др[угие] статьи расходов) говорят за необходимость неотложно приступить к разработке материалов.

Заведывающий Центральным статистическим бюро
при Министерстве земледелия Республики Армении
*Б. Ишханян*
Члены коллегии по экономической секции
*бр. Маиловых Г. Григорян*

ЦГИА АрмССР, ф. 205, оп. 1, д. 780 (часть 2-я), л. 333 и об.—334. Подлинник. Машинопись.

## № 7

### *Телеграмма Главного управления земледелия и государственных имуществ в Тифлисе—представительству армянской дипломатической миссии в Грузии (для Бахши Ишханяна)*

*—по вопросу о месте разработки материалов сельскохозяйственной переписи*

№ 2493 13 декабря 1919 г.

Ни в коем случае не может быть допустимо, чтобы разработку материалов производить в Тифлисе. Деятельность бюро* окончательно расстроилась. Выезжайте. Главноуправляющий.

ЦГИА АрмССР, ф. 203, оп. 1, д. 309, л. 26. Копия. Машинопись.

## № 8

### Հայաստանի Մինիստրների խորհրդի որոշումը 1917 թ. գյուղատնտեսական վիճակագրության նյութերը մշակելու համար վարկ բացելու մասին

*22 ապրիլի 1920 թ.*

*Լսեցին. Գյուղատնտեսության մ[ինիստր]ի զեկուցումը 1917 թ. համառուսական գյուղատնտեսական վիճակագրության տվյալները մշակելու համար մեկ միլիոն ռուբլի վարկ բանալու մասին։*

*Որոշեցին. Սկզբունքով համարել այդ առաջարկությունը կարևոր և ընդունելի, բայց իրագործումը հետաձգել ավելի բարեհաջող ժամանակի։*

*Հայկ. ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 206, ց. 1, գ. 112, թ. 116։ Պատճեն։ Մեքենագիր։*

## № 9

### Հայաստանի գյուղատնտեսության և պետական գույքերի նախարարության պետական ընդհանուր վիճակագրության գլխավոր բաժանմունքի գրությունը նախարարին՝ 1917 թ. գյուղատնտեսական վիճակագրության նյութերը մշակելու համար թուղթ տրամադրելու մասին

*№ 772* *27 հոկտեմբերի 1920 թ.*

*Ձեռնարկելով 1917 թ. համառուսական գյուղատնտ[եսական] վիճակագրության Հայաստանի վերաբերյալ նյութերի մշակման, որի համար պահանջվում է մեծ քանակությամբ ինչպես գրելու, նույնպես և տպագրական թուղթ, ուստի սրանով դիմում ենք Ձեզ ու խնդրում, բարեհաճել կարգադրելու, որ գյուղատնտեսական բաժանմունքի պահեստում գտնված թղթերից մեզ փոխարինաբար տրամադրվի 5 (հինգ) փութ գրելու և 15 (տասն և հինգ) փութ տպագրելու թուղթ։*

*Բաժանմունքի կառավարիչ* Բ. Իշխանյան

*Քարտուղար***

*Հայկ. ՍՍՀ ՊԿՊԱ, ֆ. 203, ց. 1, գ. 121, թ. 120։ Բնագիր։ Ձեռագիր։*

---

* *Խոսքը Գյուղատնտեսության և պետական գույքերի գլխավոր վարչության վիճակագրության բաժնի (բյուրոյի) մասին է, որի վարիչը Բախշի Իշխանյանն էր։*

** *Ստորագրությունն անընթեռնելի է։*

## № 10

### Հայկական ՍՍՀ գյուղատնտեսության ժողովրդական կոմիսարիատի գյուղատնտեսության բաժանմունքի գրությունը ժողկոմի տեղակալին՝ 1917 թ. գյուղատնտեսական վիճակագրության նյութերի մշակման ընթացքի և այդ գործի համար վարձատրության մասին

№ 94 — 11 փետրվարի 1921 թ.

*1920 թ. հոկտեմբերից բաժանմունքս ձեռնարկած լինելով մշակելու 1917 թ. գյուղատնտեսության վիճակագրության Հայաստանի վերաբերյալ նյութերը, որպիսի գործը ղեկավարելու համար հրավիրված էր վարիչ։ Վերոհիշյալ պաշտոնյան իր պարտականությունները վարելով մինչև նույն թվականի դեկտեմբերի 20-ը, հեռացավ պաշտոնից, որից հետո վարիչի պարտականությունները ես հանձն առի։ Քանի որ վերոհիշյալ պարտականությունը ես կատարել եմ իմ անմիջական պարտականություններից և հերթից դուրս, ուստի սրանով խնդրում եմ Ձեզ կարգադրել տալու ինձ հունվար ամսում վարիչի պարտականությունները կատարելու համար հասանելիք վարձատրությունը։*

*Բաժանմունքի կառավարչի օգնական**

*Հայկ. ՍՍՀ Հոկտեմբերյան հեղափոխության և սոցիալիստական շինարարության պետական կենտրոնական արխիվ, ֆ. 123, ց. 1, գ. 1, թ. 203։ Բնագիր։ Ձեռագիր։*

---

* *Ստորագրությունը հնարավոր է՝ Ա. Ղարանյան։*